Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. փետրվարի 7-9-ը Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Մոսկվա կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա 2022թ. փետրվարի 7-9-ը

4. Հրավիրող կողմը՝
«ՊրոդԷքսպո-2022» միջազգային ցուցահանդեսի ղեկավարություն

5. Գործուղման նպատակը՝

- «ՊրոդԷքսպո-2022» միջազգային ցուցահանդես /երկրի մասնակցութուն/
- Հանդիպում ԵՏՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով նախարարի հետ
- Հանդիպում X5 Group ընկերության ղեկավար կազմի հետ
- Այցելություն Ռուսաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես/ВДНХ/. հայկական մասնաշենքի դիտարկում՝ որպես կապող օղակ հայ արտադրողների և ռուս մատակարարների միջև

6. Քննարկված թեմաները՝

- «ՊրոդԷքսպո-2022» միջազգային ցուցահանդեսում հայկական արտադրանքի ճանաչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում
- ՌԴ մանարծախ շուկայում հայկական ապրանքների տեսականու ավելացմանն ուղղված քայլերի իրականացում
- Հայկական ապրանքների համար մշտական ցուցադրության ապահովում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- 2022 թվականի փետրվարի 7-11-ը Մոսկվայի «Էքսպոցենտր» համալիրում տեղի ունեցավ սննդի և խմիչքների ամենամյա «ՊրոդԷքսպո-2022» 29-րդ միջազգային ցուցահանդեսը: Պրոդէքսպոն սննդարդյունաբերության ամենամեծ միջազգային ցուցահանդեսն է Ռուսաստանում և Արևելյան Եվրոպայում: Հայաստանը ցուցահանդեսին մասնակցում էր ազգային միասնական երկու տաղավարով՝ գինիներ և ագրոպարենային ապրանքներ: Ցուցահանդեսին Կառավարության համաֆինանսավորմամբ մասնակցել է 37 կազմակերպություն, ինչպես նաև առանձին տաղավարներով ևս 15 հայկական կազմակերպություններ:
  Արման Խոջոյանը մասնակցել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ Մոսկվայում կազմակերպված «Հայկական գինու օրեր» միջոցառմանը, որի նպատակն է առավել ճանաչելի դարձնել հայկական գինին ռուսական շուկայի համար: «Հայկական գինու օրեր» միջոցառման շրջանակում կազմակերպվել են համտեսներ, վարպետության դասեր, ինչպես նաև պրոֆեսիոնալ քննարկումներ և սեմինարներ:
- Հանդիպում ԵՏՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով Կոլեգիայի անդամ (Նախարար) Արտակ Քամալյանի և գյուղատնտեսության դեպարտամենտի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ագրոարդյունաբերական ոլորտին առնչվող օրակարգային հարցեր, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում սերմերի արտադրության և ներմուծման/արտահանման ժամանակ որակի վերահսկման միասնական համակարգի ներդրման հնարավորություններն ու պահանջները, օրգանական սերտիֆիկացմանն ու շուկայահանմանն առնչվող՝ ՀՀ կողմից բարձրացված մի շարք խնդրահարույց հարցեր:
- Հանդիպում-քննարկում X5 Group ընկերության միջազգային համագործակցության հարցերով ղեկավար Մարիա Էքսլերի հետ: Քննարկման առանցքային թեման վերաբերել է մանրածախ շուկայում հայկական ապրանքների տեսականու ավելացման և մատակարարման խոչընդոտների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, ռուսական մանրամեծածախ շուկայում հայկական ապրանքների առաջմղման հնարավորություններին: Առաջիկայում հնարավոր է Մարիա Էքսլերի այցը Հայաստան՝ տեղում ծանոթանալու արտադրություններին և բարձրացված հարցերին:
- Ռուսաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի/ВДНХ/ հայկական տաղավարի գլխավոր տնօրենի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ու ՌԴ-ում ՀՀ դեսպանության ակտիվ աջակցությամբ կազմակերպվել է կլոր

սեղան քննարկում «ԱրմՊրոդԷքսպո-2022» մասնակից հայ արտադրողների հետ՝ նվիրված Ռուսաստանի Դաշնությունում հայկական արտադրանքի առաջմղման ուղղությամբ պայմանավորվածությունների ձեռք բերմանն ու հայկական ապրանքների համար մշտական ցուցադրության ապահովմանը:

Արման Խոջոյանին է ներկայացվել Հայաստանի նորացված տաղավարը՝ նախատեսված հայկական ապրանքների ու ապրանքանիշերի առաջմղման և հանրահռչակման համար:

Քննարկվել են առևտրատնտեսական առանձին կառույցների հետ առնչվելիս առաջացող արդիական հարցեր, ինչպես նաև օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչների կողմից բիզնես գործունեության իրականացման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծման հնարավոր ուղիներ: Կլոր սեղանին հաջորդել է աշխատաժողով, որի ընթացքում մասնակիցները անմիջական մթնոլորտում հնարավորություն են ունեցել փոխանակել մտքեր տարբեր խնդիրների շուրջ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

2/14/2022

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

14.02.2022թ.